ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՀԱՅՏ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԴՊԻՐԻ ՄԻ ՎԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բիբլիական Արարատի գագաթը շատերն են փորձել նվաճել: Այդ նպատակով կազմակերպվել են բազմաթիվ արշավախմբեր: Առաջիններից մեկը, ով փորձեց բարձրանալ Արարատի գագաթը, հայ ժողովրդին հայտնի Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտն էր: Վերջինս դիմել էր Ռուսաստանի կառավարությանը՝ իրեն Արարատի գագաթը բարձրանալու թույլտվություն տալու համար: Այսպես, 1828 թ. դեկտեմբերի 19-ին ֆելդմարշալ Ի. Պասկևիչին ուղղված գեներալ-ադյուտանտ Զակրևսկու նամակում հայտնվում էր, որ Նախարարների խորհուրդը, նոյեմբերի 2-ին քննարկելով Դորպատի համալսարանի պրոֆեսոր Պարրոտի խնդրանքը՝ Արարատի գագաթը ուսումնասիրելու նպատակով, իրեն և իր չորս ուսանողներին թույլտվություն տալու համար, ձեռնարկը համարում է օգտակար և ոչ միայն թույլատրում է Պարրոտին արշավախումբ հավաքագրել, այլև համապատասխան հանձնարարականներ է տալիս Հայկական մարզի պետին՝ ամենալայն աջակցություն ցույց տալ արշավախմբին[1]:

1829 թ. սեպտեմբերի վերջին նրա արշավախմբին, որում ընդգրկված էր նաև Խաչատուր Աբովյանը, հաջողվեց հասնել Արարատի գագաթը և երկու խաչ ամրացնել այնտեղ: Սակայն, այս արշավախմբի ձեռքբերումները ժամանակին հարուցեցին շատերի կասկածանքը: Արշավախմբի արդյունքները առաջինը հրապարակավ չընդունեց և այդ մասին հանդես եկավ այն ժամանակ դեռևս Երևանի մարզի վարչության աշխատակից, Հայաստանի և Կովկասի մասին աշխատությունների հեղինակ Իվան Շոպենը[2]: 1831 թ. փետրվարին, «Թիֆլիսի տեղեկագիր» հանդեսում Շոպենը մի քանի հաղորդագրություններ զետեղեց այն մասին, որ չնայած պրոֆ. Պարրոտի գիտական արշավախմբի ջանքերին՝ Արարատի գագաթը Նոյի ժամանակներից ի վեր չի նվաճվել, քանի որ նրանց կողմից դրված խաչի տեղն առանց դժվարության կարողանում են բարձրանալ տեղի որսորդները: Հեղինակի կարծիքով, այդ տեղից մինչև լեռան գագաթ դեռևս «մեկ

---

[1] АКАК, т.7, Тифлис, 1878, док. 445, с.493.

[2] **Շոպեն Իվան Իվանովիչ (1798-1870),** Պատմաբան-ազգագրագետ, ազգությամբ ֆրանսիացի: 1825 թվականից մշտական բնակություն է հաստատել Ռուսաստանում: Երկար ժամանակ ծառայել է Կովկասում, այնուհետև աշխատանքի է անցել պետական ունեցվածքի նախարարությունում: Միաժամանակ զբաղվել է Կովկասի՝ հատկապես Վրաստանի ու Հայաստանի պատմության և ազգագրության հարցերով: Նրան են պատկանում «Исторический памятник Армянской области в эпоху присоединения ее к Российской империи, СПБ, 1852» և «Новые заметки на древней истории Кавказа и его обитателей, СПБ, 1866» աշխատությունները: Ունեցել է հայագիտական և վրացագիտական մեծ գրադարան:

օրվա քայլքի ճանապարհ կա»[3]: Ավելին, իր տարակարծությունները Շոպենը հաստատում էր Ակոռիի գեղջավագ Ստեփան Տեր-Մելիքովի կողմից տված «վկայություններով», թե իբր վերջինս հաստատել է, որ Պարրոտի արշավախումբը Արարատում գտնվելու ողջ ժամանակաընթացքում իրենց գյուղից չի հեռացել և որ ինքը ամեն քայլափոխի եղել է արշավախնբի հետ: Այլ խոսքով՝ արշավախմբի կողմից Արարատի վրա ամրացված խաչը լեռան միջնամասից այն կողմ չի անցնում[4]:

Իհարկե, հրապարակումը չէր կարող աննկատ մնալ Պարրոտի կողմից: Կովկասի հնագրագիտական հանձնաժողովի նյութերում՝ ԸԽԸԽ-ում, մենք հանդիպեցինք Ռուսաստանի Լուսավորության նախարար իշխան Լիվենի՝ 1831 թ. հուլիսի 5-ին գեներալ Պանկրատևին ուղղված նամակին, ուր մասնավորապես ասվում էր. «Տեղեկանալով հրապարկման մասին, Պարրոտն ապացուցում է, որ Շոպենը բավարար գիտելիքներ չունի Արարատի տեղագրության, առավել ևս նրա ֆիզիկական հատկությունների մասին, որպեսզի դատողություններ անի այս հարցի շուրջ»[5]: Նամակից երևում է նաև, որ Պարրոտը խնդրել էր համապատասխան հետաքննություն անցկացնել և որպես վկաներ հրավիրել Արարատի գագաթի վերելքին մասնակցած անձանց. Պարրոտը տվել է 41-րդ եգերական գնդի շարքային Ալեքսեյ Զդորովենկոյի, Ակոռի գյուղի բնակիչներ Մուրադ Պողոսյանի և Հովհաննես Այվազյանի անունները»[6]:

Նամակում Պարրոտը խնդրել էր նաև կրկնակի քննություն անցկացնել և անպայման երդման պարտադրանքով: Ինչ վերաբերում է Ակոռիի գյուղապետի տված վկայություններին, ապա պրոֆեսորը վերջինից պահանջել էր հարցաքննության ժամանակ պատասխանել հետևյալ հարցերին՝

1. Արդյո՞ք եղել է նա իր հետ սեպտեմբերի 12-ին,13-ին և 14-ին,
2. Եթե այդպես է, ապա ի՞նչն է խանգարել արշավախմբին ճանապարհը շարունակելու համար,
3. Եթե տեղի որսորդները հեշտությամբ հաղթահարել են այդ բարձրունքը, ապա ո՞վ և երբ՞ է բարձրացել,
4. Եղել է արդյոք Մելիքովն իր հետ սեպտեմբերի 26-ին, 27-ին և 28-ին և ի՞նչ է արել նա այդ ընթացքում,
5. Եվ վերջապես, այդ օրերին եղել է արդյո՞ք գյուղում համաճարակ, քանի որ իրենք հնարավորինս խուսափել են տեղի գյուղացիների հետ շփվելուց, առավել ևս նրանց տներում գիշերելուց[7]:

Նշանավոր ԸԽԸԽ-ում տեղ գտած այս տեղեկությունները ժամանակին, երբ զբաղված էինք Ռուսաստանում 19-րդ դարի հայագիտական գրականության քննության հարցերով, մեզ վրա գրեթե սպառիչ պատասխանի տպավորություն թողեցին: Ավելին, ինչպես երևում էր Լուսավորության նախարարի բնութագրումներից, վերջինս բավականին գոհ է եղել արշավախմբի արդյունքներից և «ոմն Շոպենի», (այդպես է որակված Շոպենը նամակում՝ Հ. Հ.), հայտնած կարծիքը համարում է խիստ անարդարացի. «Պա-

[3] Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч .I, М. 1833 г., ч. I, с. 24.

[4] АКАК т.7, Тифлис, 1878, док. 458, с. 503.

[5] Նույն տեղում:

[6] Նույն տեղում, էջ 504:

[7] Նույն տեղում:

տիվը թանկ է յուրաքանչյուր մարդու համար,- գրել է նախարարը,- այն էլ այնպիսի նշանավոր գիտնականի համար, որը համընդհանուրի կողմից բարի անուն է վաստակել և տեսնում է, թե ինչպես են ցանկանում մթագնել իր կատարած գործը, որը կարևոր է ոչ միայն Եվրոպայի, այլև Ռուսաստանի համար հատկապես: Ուստի ես համոզված եմ,- ավարտում է իր խոսքը իշխան Լիվենը,- չպետք է հապաղել կատարելու պրոֆեսորի արդարացի խնդրանքը, և երդման տակ տրված նրանց պատասխանների մասին տեղեկացրեք անձամբ ինձ»[8]: Նման հակահիրապարակումները սովորական երևույթ էին այն ժամանակվա համար, ուստի հարցը համարեցինք փակված: Սակայն վերջերս բոլորովին պատահական, երբ նյութեր էինք հավաքում Սուրմալուի պատմության վերաբերյալ, մեր ուշադրությունը գրավեց «Արարատ» (նախկին «Էջմիածին») ամսագրում զետեղված Խ. Աբովյանի հոդվածը, որն արտատպված էր «Սանկտ-Պետերբուրգի լրագիր» հանդեսից: Մեծ լուսավորիչն այն հրապարակել էր գերմաներեն լեզվով 1835 թվականին և ստորագրել էր որպես ***Հայ Եկեղեցու դպիր***:

Հրապարակման ներածականում Աբովյանը գրում է. «Քաղաքական խորհրդական Պարրոտի՝ Արարատի գագաթը անմիջապես բարձրանալուց հետո Թիֆլիսում և նույնիսկ Նախիջևանում կասկած հարուցեցին այդքան ծանր և հռչակավոր ձեռնարկության գլուխ գալու դեմ, որը, ինչպես հայտնի է, առաջինն էր իր տեսակի մեջ: Այդ կասկածը ծագել էր կեղտոտ մի աղբյուրից, որը սակայն այնքան աննշան էր (խոսքը Շոպենի մեր հիշատակած հոդվածի մասին է՝ Հ. Հ.), որ հռչակավոր գիտնականը դրա վրա առանձին ուշադրություն չդարձրեց: Բայց երբ մի հարգելի ձայն Թիֆլիսի լրագրի այդ կասկածը կրկնեց… այն ժամանակ Պարրոտը այլևս չէր կարող լռել…»[9]: Բանն այն էր, որ հակառակ կողմի կարծիքները հիմնված էին արշավախմբին մասնակցած չորս ուղեկիցների՝ միմյանց հակասող վկայությունների վրա, որնցից երկուսը հայեր էին, իսկ երկուսը ռուսներ:

Հրապարակման ներածականից ակնհայտ է դառնում, որ Աբովյանին առաջին հերթին վիրավորել էր այն հանգամանքը, որ վերջիններս (ի դեպ, դատելով հոդվածից, կասկած հարուցող հրապարակման հեղինակներից մեկն էլ ազգությամբ հայ է՝ Հ. Հ.) ցանկություն չեն հայտնել իրեն լսել: Աբովյանն այնուհետև գրում է. «Եթե իմ հայրենակիցները սնոտիապաշտությունից և նախապաշարումից դրդված չկամեցան հավատալ, որ խորհրդական Պարրոտը Արարատի ամենաբարձր գագաթն է բարձրացել. դա ես վերագրում եմ նրանց՝ ձեռնարկության մասին ունեցած պարզամիտ հասկացողությամբ և այն ավանդության, որը խորը արմատներ է գցել նրանց սրտերում, ինչ-որ նրանք պատմում են սուրբ նախահայր Հակոբի մասին… Առասպելը հայտնի է. ըստ որում՝ այդ սուրբը չնայած իր բոլոր ձգտումներին և սրբազան ջանքերին՝ Նոյի տապանը տեսնել, ուրիշ ոչինչ չստացավ, բացի տապանի մի կտոր փայտից: Ուղարկված հրեշտակը հայտնապես հայտնեց նրան, թե արգելված է մի որևէ մահկանացուի այդ սուրբ տեղերը ոտով կոխելու, այլապես նա կենթարկվի աստվածային բարկության: Ուրեմն՝ եթե իմ հայրենակիցները,- շարունակում է Աբովյանը,- այդքան հարգանք են ցույց տալիս դեպի իրենց վեհ լեռը, որի վրա Աստված մի ժամանակ մարդկային ցեղը ազատեց, և նրան դիտում են իրբրև սրբություն և պաշտում են, դրանում, ի բոլոր սրտի,

[8] Նույն տեղում:

[9] «Արարատ», 1893, էջ 359:

միանում եմ նրանց կարծիքի հետ:

Նրանք պետք է իրենց այդ ունեցվածքով հպարտ լինեն, որի նմանը ուրիշ որևէ երկիր չունի և թող հանգստանան՝ իմանալով, որ ոչ թե այն հողի վրա ենք կանգնել, ուր տապանն էր կանգնած, այլ այն հաստ ձյան շերտի վրա, որն անկասկած 100 ոտնաչափ ավել է և ծածկում է այդ սուրբ հողը»[10]: Աբովյանը գրում է, որ որպես իրականացրած ձեռնարկի ապացույց՝ իր հետ բերել էր սառցե մի կտոր, որը հալվել էր շշի մեջ և «բարեպաշտ եպիսկոպոսներից և վարդապետներից մի քանիսը վերցնելով մասամբ իրենց երեսը թրջեցին, մասամբ էլ սրբորեն պահպանեցին»[11]:

Այնուհանդերձ, արշավախմբի վերադարձից հետո Աբովյանին հիասթափություն էր սպասում, քանի որ նրա շուրջ սկսվում է ձևավորվել անվստահության մթնոլորտ. «Ինձ հետ թշնամաբար են վարվում, որոնց մեջ և այն երկու հայ գյուղացիները, որոնք մեզ հետ վերևում էին,- գրում է նա: - Դեռ Արարատի ստորոտում եղած ժամանակ իրենց հարևաններից և գյուղի ծերերից նրանք այն աստիճան չարչարվեցին և ծաղրի ենթարկվեցին, որ մոտս եկան՝ սրտանց հայտնելով, որ եթե մենք չօգնենք, նրանք ստիպված կլինեն ճշմարտությունը բացարձակորեն ուրանալ և այդպիսով հանգստություն և ապահովություն ստանալ: Ի դեպ, ԸԽԸԽ–ում զետեղված 1830 թ. ապրիլի 30-ի մի զեկուցագրում ևս հաստատվում է, որ Կովկասի շատ գագաթներ, այդ թվում նաև Արարատի գագաթը նվաճելուց հետո «շրջակա բնակիչները, հետևելով իրենց նախապաշարումներին, արշավախմբի անդամներին սպառնում էին մահապատժով»[12]: Այստեղից պարզ նկատելի էր, թե ինչու այն երկու անձինք ստիպված են եղել սխալ վկայություն տալ, այն անձինք, որոնց ես մեծ դժվարությամբ, մասամբ աղաչելով, մի կերպ մեզ հետ վերև էինք տարել, որովհետև նախ դժվարությամբ էին կրում նեղությունները և ապա երկյուղից չէին ցանկանում մեզ հետևել»[13]: Ահա այսպիսին է եղել գագաթից վերադառնալու առաջին արձագանքը:

Հոդվածի իրական արժեքն ու գնահատությունը, սակայն, Խ. Աբովյանի կողմից ականատեսի աչքերով Արարատի գագաթի նվաճման նկարագրությունն է. «***Ուրեմն ես ասում եմ, այո, ես հաստատում եմ՝ ամբողջ Եվրոպայի առաջ, որ ես քաղաքական խորհրդական Պարրոտի հետ երրորդ փորձի ժամանակ Արարատի գագաթը բարձրացել եմ, որ ես ինքս իմ ձեռքով կանգնեցրել եմ մի փայտյա խաչ գագաթի հյուսիսային մասում և սառած ձյան մեջ ամրացրել եմ, որ դա ամենաբարձր գագաթն էր՝ ապացուցում եմ*** (ընդգծումը մերն է՝ Հ. Հ.)»[14]: Ավելին, Աբովյանը գագաթի նվաճման ուշագրավ մանրամասներ է հաղորդում. «Հեռվից լեռանը նայելով ես միշտ կարծել եմ, թե նա պետք է երկու գագաթ ունենար: Բայց բարձրանալու ժամանակ, երբ մենք արդեն մի քանի ժամ շարունակ ձյան մեջ քայլում էինք և վերջապես մի բավական ընդարձակ բարձրություն մեր առաջ բացվեց և բոլորս էլ կարծեցինք, թե նա ամենաբարձր գագաթն էր: Մեր ուրախությունը այդ տեսարանից համարյա անհետացավ, երբ մենք նրա վրայից տեսանք երկրորդը: Թե ինչ վատ տրամադրության մեջ ընկանք, այդ մասին լռում եմ: Պարրոտն այդ ժամանակ ցույց տվեց արտակարգ հաստատակամություն և հոգու

[10] Նույն տեղում, էջ361:

[11] Նույն տեղում:

[12] ԱԿԱԿ, նույն տեղում, էջ889:

[13] «Արարատ», նույն տեղում, էջ362:

[14] Նույն տեղում, էջ363:

ներկայության բարձր օրինակ. նրանից ոգևորված և մասամբ հուսահատված, մենք քայլերը ուղղեցինք դեպի այդ երկրորդ գագաթը»[15]:

Ինչպես նկատում ենք, Աբովյանը գրում է ճշմարտացի և իր խոսքերին չհավատալու կասկածի տեղիք չի տալիս: Այդուհանդերձ, կասկածը փարատելու համար արշավախմբի անդամները շարժվում են դեպի ավելի բարձր թվացող այդ գագաթը: Թե ինչ եզրակացության են հանգում նրանք այդ ամենից հետո, Աբովյանը հետևյալն է հաղորդում.« Ես պարզորեն խոստովանում եմ՝ որ լավ չեմ հիշում արդյոք երկու թե երեք ժամ ստիպված էինք այդ դժվարությունը հաղթելու համար քայլել, մինչև որ մենք այնպիսի մի գագաթ հասանք, ***որտեղից մյուս բոլորը, թե աջ և թե ձախ, արևելքից և արևմուտքից, մեզնից ցած էին երևում*** (ընդգծումը մերն է՝ Հ. Հ.)»,-գրում է նա[16]:

Եվ այդուհանդերձ, այդ հանգամանքը նույնիսկ չէր հանգստացրել Աբովյանին և նա փորձել է կատարել տեղանքի իր սեփական զննությունը. «Որպեսզի մեր ձեռնարկության հաջողված լինելու մասին ավելի ևս համոզված լինեինք, և մինչ պ. Պարրոտը զբաղված էր ծանրաչափի հետազոտությամբ, գագաթից ես ուղղվեցի դեպի ս. Հակոբի վանքը՝ մեր օթևանը, որովհետև այն գտնվում էր համարյա թե ուղղակի տարածությամբ՝ ուղղահայաց լերկ սև զառիվայրի ամենաներքին մասում, այնպես որ, եթե մեկը ներքևից դեպի վերև նայեր, ***հնար կունենար գագաթը տեսնելու*** (ընդգծումը մերն է՝ Հ.Հ) : Ես կատարեցի ցանկությունս. տեսա վանքը և նրա շրջակայքը և նույնիսկ լեռան երկու կողմերը, որոնք ամփոփում են վանքը և նրա հովիտը»[17]:

Իսկ հիմա ուշագրավ շարունակությունը. «Այստեղ ես կանգնեցրի խաչը՝ մի ձեռնարկություն, որի հիշելը մինչև այժմ ամբողջ մարմինս սարսուռ է պատճառում: Օրը հրաշալի էր… Երևանը, Երասխը, Բայազետը, Եփրատը, Սևանա լիճը, Փոքր Արարատը և մյուս բոլորը կամ ձյունով էին ծածկված, կամ լերկ լեռները իրենց գոլորշիով լցված հովիտներով, որ մենք ոչ մի ուրիշ կետից այնպես միասին չէինք տեսել, այս հրաշալի նկարի դյութական տեսարաններ էին, որ ետ դառնալիս գեղեցիկ կերպով օժանդակեց մեզ՝ նոր երևացող հրաշալի լուսինը»[18]: Այլ խոսքով, որքանով ակնհայտ է դառնում Աբովյանի նկարագրությունից, արշավախմբի անդամները խաչը ամրացրել են Արարատի գագաթին ոչ այնքան այն ամենից բարձրը լինելու հանգամանքը նկատի ունենալով, այլ որ այդ տեղը ամենից երևացող և իր մեջ խորհուրդ պարունակող տեղանքն է եղել: Ահա և մեր կարծիքով, այն թյուրիմացությունը, ինչն այդքան տարակարծությունների առիթ էր տվել «ձեռնարկության», ինչպես արտահայտվում էր Աբովյանը, արժանի գնահատության համար:

Մեծ լուսավորիչն այդ հարցում համենայն դեպս, բավականին մտահոգված է. «Թե ինչու Հայաստանում ես, ինչպես և երկու մյուս ռուս վկաները չկարողացան այս ճշմարիտ պատմությունը երդումով հաստատել, պատճառն այն է, որ այն ժամանակ, երբ պ. Պարրոտը պահանջեց զինվորներին և հայ գյուղացիներին երդվեցնել, ես արդեն Դորպատում էի…»[19]:

Այս պատմության մեջ որքան էլ տարօրինակ է, բավականին զգույշ, կարելի է ասել

---

[15] Նույն տեղում, էջ364:

[16] Նույն տեղում:

[17] Նույն տեղում:

[18] Նույն տեղում:

[19] Նույն տեղում, էջ 365:

նույնիսկ որոշակի կրավորական դիրք է բռնել արշավախմբի ղեկավարը՝ Ֆրիդրիխ Պարրոտը: Նախ տարակուսանք է հարուցում այն հանգամանքը, թե ինչու Պարրոտը իր զեկույցում չի տվել Խաչատուր Աբովյանի անունը: Նույն կերպ էլ անհասկանալի է մնում, թե ովքեր էին այդ չորս ուսանողները: Համենայն դեպս, Աբովյանի հաստատումից այն տպավորությունն է, որ անվանի գիտնականին այս ամենը կարծես ձանձրացրել է. «Մի օր ես գնացի այցելելու նրան,- գրում է Աբովյանը: - Երբ ես տուն էի վերադառնում, պ. Պարրոտը ինձ ասաց, որ ինձ պետք է քննության ենթարկեն: Ես խնդրեցի նրանից բարձրանալու ուղիղ թվականը: Նա պատասխանեց, որ ինձ ոչինչ չի ասել և որ ես պետք է հայտնեմ՝ ինչ որ ես գիտեմ, այլ ոչ թե ինձ ինչ որ ասեն: Բայց, բարեբախտաբար, Ս. Հակոբի վանքը գալով ամեն բան ինձ համար պարզ դարձավ, ինչ որ ես բարձրանալու ժամանակ նկատել էի: Այնտեղ էլ ես գտա թիվը»[20]: Աբովյանը գրում է, որ առանձին դրվագներ ճշտելու համար ինքը ստիպված է եղել նույնիսկ Դորպատից Հայաստան վերադառնալ:

Ցավոք, Աբովյանը չի գրում, թե ինչ հարցեր են տվել իրեն քննիչները, կամ թե որոնք են եղել նրանց հարցումների իրական պատճառները: Համենայն դեպս, մեզ չի թվում, թե քննիչների հարցումները վերաբերել են միայն գագաթի նվաճմանն առնչվող խնդիրներին: Դժբախտաբար, այս հարցի մասին Աբովյանի հոդվածում բացատրություններ չկան, ինչն ավելի հետաքրքրություն կհաղորդեր հրապարակմանը (գուցե, հանդեսի խմբագիրներ՞ն են ավելորդ զգուշություն ցուցաբերել՝ Հ. Հ.): Այս ամենն իհարկե, վարկածի տեսքով, թեպետ առանց այն էլ այս խնդրում, որքանով նկատում ենք, նման մտահանգումների պակասություն չի զգացվում: Այդուհանդերձ, Աբովյանը չի հուսահատվել և հոդվածի ավարտական մասում գրում է. « Աստված ինձ կօգնի իմ բարեպաշտ մտադրության մեջ, թեև կարող եմ ***մեծ դժվարությունների հանդիպել*** (ցավոք, Աբովյանը չի գրում, թե ինչ դժվարություններ էին դրանք՝ Հ. Հ): Ես կարող եմ Արարատը բարձրանալը հաստատելու ուրիշ հանգամանքներ կցել, հաստատելու իմ այս վկայությունը, բայց ինչու՞ համար…»[21]:

Հրապարակման ավարտը. «Գուցե մի եվրոպացի այցելի իմ գեղեցիկ հայրենիքը, որպեսզի զարմանքով դիտի նրա վեհափառ լեռները, նրա սիրասուն հովիտները, որոնց նմանը ամբողջ աշխարհում պետք է փնտրել և հիանա ամենահին ժամանակների մարդկային հրաշալի հիշատակարանների վրա: Այս եռանդուն և ազնիվ անձին խնդրում եմ, որ նա չերկնչի դժվարություններից բարձրանալու մեր Սուրբ Լեռը և այնտեղից դիտի իմ հրաշալի հայրենիքը: Նա առատորեն կվարձատրվի և ճշմարտությունը կընդունի»[22]:

Ահա այսպիսի տարակարծությունների տեղիք էր տվել Պարրոտի արշավախմբի կողմից Արարատի գագաթը նվաճելու իրողությունը:

Ինչևէ, ընթերցողին հիշեցնենք, որ Պարրոտից հետո Արարատի գագաթը նվաճելու փորձ 1834 թ. կատարեցին նաև ռուս գիտնական Սպասսկի-Ավտոնոմովը, 1845 թ. ակադեմիկոս Աբիխը և 1850 թ. ռուսական գլխավոր շտաբի գնդապետ Խոդկոն[23]:

---

[20] Նույն տեղում:

[21] Նույն տեղում:

[22] Նույն տեղում:

[23] Материалы для изучения экономическо быта государственных крестьян Закавказского края, Тифлис, 1886, т.3, с.229.